



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունվարի 2021 թվականի N 77 - Ն

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ
ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ
ՊԱՀԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել պետության կարիքների ապահովման նպատակով ձեռք բերվող էներգասպառող արտադրանքների էներգետիկ բնութագրերի պարտադիր պահանջներն ու խմբերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունվարի 21-ի N 77 - Ն որոշման

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՈՒ ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ
ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ

1. Պետության կարիքների ապահովման նպատակով ձեռք բերվող էներգասպառող արտադրանքների էներգետիկ բնութագրերի պարտադիր պահանջները սահմանվում են հետևյալ սարքերի և սարքվածքների խմբերի համար.

1) ընդհանուր լուսավորության սարքեր (սարքվածքներ) և լամպեր, որոնց էներգետիկ բնութագրերին ներկայացվող պահանջները տրված են աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1. ընդհանուր լուսավորության սարքերի (սարքվածքների) և լամպերի էներգետիկ բնութագրերին ներկայացվող պահանջներ

Հ/Հ	Խմբի անվանումը	Սարքի անվանական հզորությունը (Վտ)	Լուսատվությունը (լմ/Վտ)	Հզորության գործակիցը (cosφ)	Գունափոխանցման գործակիցը (Ra, %)	Ծառայության ժամկետը (ժամ)
1.	Լուսավորման սարքեր և լամպեր (ներառյալ ներկառուցված ԳԿՄ*-ով կամ սնման աղբյուրով), որոնք օգտագործվում են ներքին լուսավորման նպատակներով	$2 \leq P < 20$	≥ 80	$> 0,5$	≥ 80	≥ 20000
2.	Լուսավորման սարքեր և լամպեր (ներառյալ ներկառուցված ԳԿՄ*-ով կամ սնման աղբյուրով), որոնք օգտագործվում են արտաքին լուսավորման նպատակներով	$2 \leq P < 20$	≥ 100	$> 0,5$	≥ 70	≥ 20000

3.	Լուսավորման սարքեր (ներառյալ ներկառուցված ԳԿՄ*-ով կամ սնման աղբյուրով), որոնք օգտագործվում են ներքին լուսավորման նպատակներով	$P \geq 20$	≥ 90	$> 0,9$	≥ 80	≥ 30000
4.	Լուսավորման սարքեր (ներառյալ ներկառուցված ԳԿՄ-ով կամ սնման աղբյուրով), որոնք օգտագործվում են արտաքին լուսավորման նպատակներով	$P \geq 20$	≥ 110	$> 0,9$	≥ 70	≥ 30000
5.	Լամպեր (առանց ներկառուցված ԳԿՄ-ի կամ սնման աղբյուրի) E14, E27, G13, G5 կոթառներով	$2 \leq P \leq 60$	≥ 75	Չի նորմավորվում	≥ 80	≥ 20000
6.	Լամպեր (առանց ներկառուցված ԳԿՄ-ի կամ սնման աղբյուրի) E27, E40, R7s կոթառներով	$P \geq 60$	≥ 80	Չի նորմավորվում	≥ 20	≥ 20000

* ԳԿՄ – գործարկող - կարգավորող սարք

2) կենցաղային օդորակիչներ՝ բաղկացած մեկական արտաքին և ներքին բլոկներից (մոնոսալիտ օդորակիչներ).

ա. սույն խմբում ներառված են սառեցման և (կամ) տաքացման ռեժիմում մինչև 12 կՎտ սառեցման ռեժիմի անվանական հզորությամբ օդորակիչներ, բացառությամբ՝

- այն մոնոսալիտ օդորակիչների, որոնցում գոլորշացուցչի և (կամ) կոմպրեսորի կողմից որպես ջերմափոխանակման միջավայր չի օգտագործվում օդը,

- մոնոսալիտ օդորակիչների, որոնք աշխատում են էլեկտրահանրակալից բացի էներգիայի այլ աղբյուրներով,

- անցուղային ներքին բլոկով մոնոսալիտ օդորակիչների.

բ. մոնոսալիտ օդորակիչների էներգետիկ բնութագրերին ներկայացվող պահանջները տրված են աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2. Մոնոսպլիտ օդորակիչների էներգետիկ բնութագրերին ներկայացվող պահանջները.

Խմբի անվանումը	Սառեցման հզորությունը (կՎտ)	Սեզոնային էներգաարդյունավետությունը (SEER) սառեցման ռեժիմում	Սեզոնային էներգաարդյունավետությունը (SCOP) տաքացման ռեժիմում
մոնոսպլիտ օդորակիչներ	մինչև 12	ոչ պակաս 5.6	ոչ պակաս 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ